600.0146.17.05.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2019 թվականի №146Ա
ք.Երևան

«ԱՐՄՓԱՈՒԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ, ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի փետրվարի 13-ի №24Ա որոշմամբ «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0636 լիցենզիան, որի 6-րդ կետի համաձայն՝ Ընկերությանը իրավունք է տրվել և պարտավորեցվել է կառուցել 254 ՄՎտ տեղակայվող հզորությամբ համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էլեկտրակայան (այսուհետ՝ Կայան),

բ) Ընկերությունը Հանձնաժողով ներկայացված 2019 թվականի մարտի 14-ի №10/19, մարտի 28-ի №14/19, մայիսի 3-ի №30/19 և մայիսի 8-ի №32/19 գրություններով հայտնել է որ, Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԱՐՄՓԱՈՒԵՐ» փակ բաժնետիրական ընկերության և «Ռենկո Ս.պ.Ա» ընկերության միջև 2017 թվականի ապրիլի 27-ին կնքված «Հայաստանի Հանրապետությունում՝ Երևան քաղաքի տարածքում, 250 ՄՎտ գազային վառելիքով կոմբինացված ցիկլով էլեկտրակայան նախագծելու, զարգացնելու, ֆինանսավորելու, կառուցելու, սեփականության իրավունքով տիրապետելու, գործարկելու և պահպանելու վերաբերյալ» շրջանակային համաձայնագրի (այսուհետ՝ Շրջանակային համաձայնագիր) համաձայն՝ Կայանի կառուցման ծրագիրն իրականացվելու է վարկային ֆինանսավորման ներգրավմամբ և, ըստ այդմ, Ընկերությունը վարկային պայմանագրեր է կնքել «Ասիական զարգացման բանկ», «Դի-Ի-Ջի Դոյչե Ինվեստիցիոնս ունդ Էնթվիկլունսգեզելշաֆտ ՄԲՀ», «ՕՊԵԿ միջազգային զարգացման հիմնադրամ» և «Միջազգային ֆինանսական կորպորացիա» կազմակերպությունների հետ

(այսուհետ՝ Վարկատուներ): Հաշվի առնելով, որ ֆինանսավորման նախապայման է Ընկերության բաժնետոմսերի, գույքի (շարժական և անշարժ) և բանկային հաշիվների գրավադրումը հօգուտ նշված ֆինանսական հաստատությունների և այդ հաստատությունների գրավի գործակալ հանդիսացող «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովի համաձայնությունը՝ կնքելու համապատասխան գործարքներ (գործարքների նախագծերը ներկայացվել են),

գ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2019 թվականի ապրիլի 2-ի №ՄՍ/2.2-21/507-19 և 2019 թվականի մայիսի 6-ի №ԳԲ/2.2-21/745-19 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Ընկերության կողմից հօգուտ Վարկատուների և «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության՝ բաժնետոմսերի, շարժական և անշարժ գույքի գրավադրման գործարքների (այսուհետ՝ Գործարքներ) վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

դ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի սույն թվականի ապրիլի 25-ի №02/16.10/19741-2019, ապրիլի 26-ի №02/16.10/20171-2019, մայիսի 3-ի №02/16.10/20262-2019, մայիսի 15-ի 02/16.10/23031-2019 գրություններով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների, տնտեսական զարգացման և ներդրումների, ֆինանսների, արդարադատության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դիրքորոշումները՝ Գործարքների վերաբերյալ առարկություններ չունենալու վերաբերյալ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և արդարադատության նախարարությունների կողմից ներկայացվել են որոշ առաջարկություններ,

ե) Հանձնաժողովի կողմից Գործարքներին համաձայնություն տալը, համաձայն «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի վնասում ազգային անվտանգությունը և պետական շահերը, իսկ ձեռքբերողի՝ որպես էլեկտրաէներգետիկական համակարգում լիցենզավորված գործունեություն իրականացնող և անհրաժեշտ փորձ ունեցող անձի վերաբերյալ դրույթը Գործարքների նկատմամբ կիրառելի չէ: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված ուղղակի դեբետագրման և հաշվի գրավադրման պայմանագրերին, ապա դրանք «Էներգետիկայի

մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով չեն համարվում համաձայնեցման ենթակա գործարքներ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ հօգուտ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (առաջին հերթի գրավ) և Վարկատուների (երկրորդ՝ հաջորդող հերթի գրավ՝ հավասար պահանջի իրավունքով) գրավադնելու՝

1) Ընկերությանը պատկանող Երևան քաղաքի Արցախ փողոցի 4-րդ նրբանցքի №14/1 հասցեում գտնվող 6 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասը,

2) գործարքի կնքման պահին Ընկերությանը պատկանող կամ ապագայում վերջինիս կողմից ձեռք բերվող ամբողջ շարժական գույքը և գույքային իրավունքները,

3) «ՍԻՄԵՆՍ ՊՐՈՋԵՔՏ ՎԵՆՉՈՒՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ Ընկերության 40 տոկոս անվանական բաժնետոմսերը,

4) «ՌԵՆԿՈ ՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող՝ Ընկերության 60 տոկոս անվանական բաժնետոմսերը,

5) «ՌԵՆԿՈ Ս. պ. Ա.» ընկերությանը պատկանող՝ «ՌԵՆԿՈ ՓԱՌԻԵՐ» փակ բաժնետիրական ընկերության 75 տոկոս անվանական բաժնետոմսերը:

2. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքներում (պայմանագրերում)՝

ա. ապահովել (ամրագրել) կապը Շրջանակային համաձայնագրի և դրա համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության, Ընկերության և «ՌԵՆԿՈ» Ս.պ.Ա.-ի միջև 2019 թվականի փետրվարի 28-ին կնքված ուղղակի պայմանագրի հետ,

բ. արտացոլել սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում նշված ուղղակի պայմանագրի 3 (b) դրույթն առ այն, որ ապահովված կողմերը համաձայնում են, որ կայանի շարունակական շահագործման համար էական համարվող գույքը և իրավունքները չեն կարող մաս-մաս փոխանցվել տարբեր

անձանց, այլ կարող են փոխանցվել միայն մեկ իրավասու փոխանցառուի, պայմանով՝ բոլոր դեպքերում, կառուցապատողի բաժնեմասերը կարող են փոխանցվել մեկ կամ մի քանի անձանց, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է իրավասու փոխանցառու,

գ. «գրանցման լիազոր մարմին» հասկացությունը և դրան առնչվող դրույթները (մասնավորապես՝ արժեթղթերի գրավադրման մասով) համապատասխանեցնել գործող իրավակարգավորումներին.

2) սույն որոշման 1-ին կետով նախատեսված գործարքները կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերի պատճենները.

3) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
17 մայիսի 2019թ.